



ԷՍՄԱՆ ԿՈՍՏԱՆԵՂՅԱՆ

(Պատմական զիտարյանների բևեռածու)

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՐՎԱՆԶՑՅԱՆՑ

(Հայ ժողովրդական էպոսի հայտնաբերման և գրառման 100-ամյակի առթիվ)

1974 թ. համայն հայությունը մեծ շորով կնշի իր ազգային դրույգագնավեճի՝ հայ ժողովրդական էպոսի՝ «Սասնա ծոեր»-ի առաջին պատումի հայտնաբերման և գրառման 100-ամյակը:

1874 թ. Կ. Պոլսում լոյս տեսավ հայ բանահյուսության մեծ երախտավոր Գարեգին Եպիփանու Սրբանձտանցի «Գրոց-քրոց» ժողովածուն, որին իրու հավելված կցված էր ժողովրդական էպոսի մի տարրերակը՝ «Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» խորագրով: Պատուի հայտնագործությունը և հրատարակությունը ունեցավ բացառիկ նըշանակություն մեր ժողովրդի նոգուր մշակույթի ասպարեզուն: Հակապական էր պատուի ազդեցությունը ժամանակի բանասերի վրա: Դրանով է բացարձիւմ այն փառքը, որ Գրիգոր Խալաթյանը այդ տարրերակը թարգմանում է ուստերեն, իսկ Արգար Հովհաննեսյանը՝ գերմաներեն: Լեզվաբան Քերովը՝ Պատկանյանը հայ բարբառերի տումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ հրատարակում է պատումն ամրողությամբ, Մշտ բարբառի վերաբերյալ համառու թերախանական ծանոթությունների մեջ միասին, իսկ մանկավարժ Սեղմակ Մանիկյանը այն վերածում է արևելահայերենի և մոցնում դարրոցական դասագրքերի մեջ:

Ամեն մի հայտնագործություն կամ հայտնաբերում կատարվում է իր ժամանակի հրամայական պահանջմաներին ի պատասխան: 19-րդ դարի 2-րդ կեսին, ազգային զարդումը և միավորման, ազատագրական շարժումների ժամանակմաներում, ազգային հնքնորոշման նշանաբանի տակ մեծ աշխատանք էր ծախարկում ժողովրդական բանավոր ատեղագործության հայտնաբերման, գրառման և հրատարակման ուղղությամբ: Այդ աշխատանքների թագն ու պասկը հանդիսացավ մեր ժողովրդական վեպի առաջին պատումի հայտնաբերումը, գրառման ու հրատարակությունը: Պատումի մեջ իր արտացոլում էր գուել մեր աննկուն ժողովրդի և ժամանակուակես Սասունի հերոս լեռնականների մղած երկարաւու պայքարը Թղարում արարական բռնակալների դեմ իր ազատության և անկախության համար: 1886 թ. ականավոր բանասեր Մանուկ Արեղյանը հայտնաբերեց էպոսի այլ տարրերակը ևս: Դրանից հետո աշխայծ գործունեություն ծավալվեց մեր ազգային վեպի այլ տարրերակներ հարունաբերելու և հրատարակելու ուղղությամբ: Եվ այժմ, երբ հայտնաբերված ու հրատարակված են էպոսի 70-ից անցնող տարրերակները, Սրբանձտանցի հայտնաբերած տարրերակն աչքի է ընկնում գեղարվեստական կատարելությամբ և գրառման



հարազատությամբ: Նրա գրած մեջմ առաջարանը բացահայտում է Սրբանձույանցի կարողությունները ժողովրդական դյուցազնավեպի ուսումնասիրության և արժնքավորման ասպարեզում: Այդ ժամանակից սկսվեց մեր ժողովրդական վեպի թարգմանությունը աշխարհի շատ լեզուներով և իր արժանի տեղը գրավեց համաշխարհային մշակույթի գանձարանում: Էպոսի համարավար տերսուի հրատարակության, գիտական մեկնարանան գրոծում իրենց արժանի ալվանոն են ներդրել անվանի հայագետներ Մ. Արենյանը, Հ. Օրբելին, Կ. Մելիք-Օհանջանյանը: 1939 թ. հայ ժողովուրդը նշեց Էպոսի կազմակրթման հազարամյակը: Էպոսի ներուները ժողովրդի սիրած կերպարներն են. ըստ անց ժողովուրդը մարմնավորել է այն լավը, ազնիվը, մաքորն ու շիտակը, քաշությունը և խիզախությունը, անվեճերությունը, հայրենասիրությունը, այն ամենը, ինչ ամրարել է հնքը հայ ժողովուրդը իր գոյության հազարամյակների ընթացքում: Էպոսը մեր ժողովրդի ոգու ազնվության վկարականն է, նրա հարատևության և անընկերի ոգու խորհրդանիշը: Այդ պատճառով էլ հասկանալի է այն խորը սիրո, հարգանքի և գորգուրանքի զգացումը, որ տածում են երախտագետ նետնորդները իր ողջ կյանքը հարազատ ժողովրդին և նրա հոգեվոր արժեքների վերհանմանը բոլորանվերի սպաս դրած համեստ հոգևորականի՝ Գարեգին Սրբանձույանցի նկատմամբ:

* * *

Գարեգին նպիկոպոս Սրբանձույանցը (մկրտության անոնը Օհաննես) ծնվել է 1840 թ. Վանի Այգեստան թաղամասում, Սանինց տոհմում, քազմանդամ արթեստավորի ընտանիքում: Սկզբանական կրթությունը ստանում է Վանի Հայելույսների վարժարանում, որ սովորում է տառանձնաշություն, կարում սաղմու և ժամագիրը: Դրանք բավարար համարելով ծնողները մանուկ Օհաննեսին տալիս են կողկալարի արթեստ սովորելու, սակայն ուսումնաւոնչ պատահն չի հրաժարվում ուսումն շարունակելու մտադրությունից: Որոշ ժամանակ անց նա սկսում է հաճախել Վանի նշանավոր մանկավարժներ Քոլոզ Օհաննեսի և Ավետիք Սահառունու դպրոցը: Սակայն այդ դպրոցը չի բավարարում պատահ Օհաննեսի հոգեկան պահանջները, և 1857 թ. նա մեկնում է Վարագ, ընդունվում Մկրտիչ վարդապետ Խորիմյանի նորարարաց: Այդ ժամանակին միայն նրա անոնը ամսագլուխուն միայնությանց իր ուսուցչի՝ Մ. Խորիմյանի անվանը:

Հենց այսուն՝ Վարագում ծանոթանալով Եղիշեի պատությանը, ոգևորվելով 5-րդ դարի մերուսական իրադարձություններով, պատահի Օհաննեսի իր անունը Եղիշեի հերոսներից մեջի անոնով փոխում է Գարեգին Սրբանձույանցի: (Հետագայում ևս բարձր գնահատելով Եղիշեի պատությունը, նա այս համարում է «ես ավետարանին նոր ավետարան» հայոց):

«Արծոի Վասպորական»-ում 1858 թ. սկսած, սկզբու երեսն, այնուեւու հաճախակի, համարյա յորաքանչյուր համարում, լույս են տեսնում նաև Սրբանձույանցի հոդվածները: «Տեսարանք հայրենի աշխարհաց», «Բորաստան քարոյական առարինությանց» ընդհանուր խորագիրը կրող, «Ծիրիմք նախանյաց», «Հայրենասիրություն և հայրենիք», «Սկըսենք մեր գործ, նորեն սկսենք» հոդվածներում արտահայտված են երիտասարդ գործի լուրջ խորհրդածությունները հայոց հայրենիքի և նրա ապազայի վերաբերյալ: Հոդվածներից մեկում Սրբանձույանցը ցույց է տալիս այն կապը, որ գոյություն ունի ժողովրդի կամ ազգի անցյալի և ներկայի միջև: Այն ազգը, որն ունի իր հեքնությունը հաստատող պատմական վկաներ, նեշտությամբ տեղի չի տալիս բռնակալների առջև, պայքարում է իր ապազայի համար. «Նախնյաց հիշատակներ այնշափ մեծ արդյունք ունեն, որ ազգություն այնու հաստատ կմնա, ազգաց մանելություն այնու կկենդանանա, հահատակաց հոգիք այնու կզրանան և հայրենյաց վերանորդություն այն տեղեն կհասածանա: Ասոր համար, շատ բարքարու ու խորամանկ բռնակությունը երբոր ազգ մը բնաշինջ առնել կամ ազգություն ուրանալ տալ ուզենին, նախ այն ազգի մեջ եղյալ գործերը կայրենին, կարդացողները կուտպանենին, հայսենյաց շիրիմներ կքանդենին, և այդ ազգի դյուցազնը, նահապետաց, թագավորաց և բաջաց պատվական ուկորներ կիշրենին կամ կվառենին»:

Հայրենասիրությունը համարելով «գերյազօն առարինութիւն» հայրենիքի գործին մարտադրված երիտասարդը հայկական բոլոր հորիզոններում հնչեցնում էր իր ձայնը, ուրի կոչում հայրենակալիցներին, պայքարի մարտահրավեր նետում հուսահատված հոգիներին, ներշնչում անպայման հայդանակի հավատով: 1862 թ. Զեյթունի ապատամությունից հետո գրված «Սկսենք մեր գործ, նորեն սկսենք» հոդվածը Վարագա բարձր հոգեվոր մի կոչ էր ողջ հայությանը՝ շիտահատություն, շուլանալոր, գործը կիսատ շթողներու համար: «Կոխն ու կոխավիր,

¹ Արծոի Վասպորական, 1861, № 2:

զարկ ու զարկվիր, ինչպար, վեր կանգնիր, անշուշտ կմայօծես, մտնիս էլ, կմայօծես, վերջապես կմայօծես, վասնցի նոր ես ու լուսավոր ես, բարի ես, ճշմարիս ես»²: Երբ երկանաք մարգարե երիտասարդ՝ Սրբաձնություն և միարանություն էր բարդողուն իր հայրենակիցներին, դրա մեջ տեսնելով փրկության և հայության առաջին և վճռական գրավականը: «Կպատվիրն (Ստոված) մեզ միարան լինել, միարան խորհել, միարան մտնել, միարան ապրել: Միանանք մեք, որենք, եղարք, զորություն ի միություն և հաղթություն ի զորություն»:

1860 թ. Սրբանձությանը այլարտեց Ժառանգավորացը, ասկայն շրածանվեց ո՞չ իր ուսուցից և ո՞չ էլ իրեն սանցող գիշերօթիկից: Արևելյան Հայաստանին մոտիկից ծառողանալոյն, այնուելի հանրային գործիչների մետ կապ հաստատելու, ինչպես նաև Ժառանգավորացի և «Արծոնի» համար համագունդույթուն կառուարելու նպատակով 1860 թ. Առյեմերի 10-ին Մ. Խորիմյանը իր մերձավորների՝ Երևանի Տևականցի, Գ. Սրբանձությանցի, Հ. Սիկիյանի մետ մեկնում է Արևելյան Հայաստան: Նրանք լինում են Երևանուուն, Եջմիածնուուն, Թիֆլիսուուն, Ղարաբաղուուն, ապա Ագուլյանուուն և Պարսկաստանի վրայով վերադառնում են Վան 1861 թ. Բուլիսին: «Մեղու»-ի 1862 թ. 176—179 համարներուուն տպվեց Սրբանձությանը ընդարձակ նկարագրությունը «Ուղևորություն Մկրտիչ վարդապետի Խորիմյան ի Ռուսաթագր» խորագրով:

1862 թ. Խորիմյանը Եջմիածնուուն եպիսկոպոս ձեռնադրվեց Տարոնի առաջնորդության վրա: Ամրապնդելով Վարագի Ժառանգավորացը ունակ ուսուցիչներով, Խորիմյանը իր մերձավորագոյն սանի, այժմ արդեն զինակցի մետ մեկնեց Տարոն: Տարոնում հայրենանկեր երիտասարդի առաջ բացվեց գործուելության լայն ասպարեզ: Ա. Կարապետ վաճրին կից բացված նոր ժառանգավորացում նա տեսուեն-ուսուցիչ էր, Միևնույն ժամանակ նույն վաճրում հրատարակվող «Արծոնի Տարոն» լրատարի խմբագիրը: Թերթի վրա գրված էր: «Արծոնի Տարոնությունը թերթ Վասպորտական Արծոնյան»: Թերթը հրատարակվեց փոքր ժամանակահաստակամությունում 1863 թ. ապրիլից մինչև 1865 թ. հունիսը: Լույս տեսավ ընդամենը թերթի 48 համար: Սակայն, չնայած դրան, թերթը ինոր թերթ բույեց արևմտահայ կյանքի ասպարեզում: Զորս Եջանոց փոքրիկ երկշարաթարքներն իր Եջերուուն հրատարակում էր հոդածներ, որոնք վերաբերում էին ողջ հայ-

կական իրականությանը: Այն բարձրացնում էր ժողովրդի լուսավորության հարցը: Ըստ երիտասարդի խարագիրի, ժողովրդի ուսումը, լուսավորությունը ինքնանապատակ չեն: Երրանք հետապնդում են խիստ գործակական և հայրենասիրական նպատակները: «Կարդացողն գիտե, թե տերություն ինչքան տոքք ստորագրելու համար առաջարկության ուղղության և հայության ամենավորը է, այնքան կոտսա, չկարդացողն գիտե քրիստոնեական կամ բարքարության բողոքել և դառ վաստիքը: Չկարդացողն գիտե բրդի կամ բարքարության համար տերության կառավարության բողոքել և դառ վաստիքը: Չկարդացողն գիտե ազտիկ արտե մը շատ պարու քաղել, չկարդացողն շատ արտ ունենա և շատ ալ ցանել, բաց անորի կը մնա»³:

Լուսավորական հարցերից զատ թերթը շեփորահարում է ազգային-ազատագրական գաղափարները, կանգնում աշխատավոր գյուղացու շահերի պաշտպանության դիրքերում: «Արծոնի»-ի Եջերուուն տպվեց Սրբանձնությանը «Մշեցիների ողբախառն աղերս ուղղված Պատրիարքարանին և Ազգային վարչությանը», որի մեջ ուժին դրսւության երիտասարդ գործի դեմոկրատական դիրքորոշումը: Համերաշխելով հոդվածում շարադրված մողերին, արևմտահայ դեմոկրատ Հարությունն Սվաճանան այդ հոդվածը արտասեպեց իր «Մեղու»-ուն: 1865 թ. բաղարական մատնությամբ փակվում է «Լուսապատրիարք Արծոնի Տարոն»-ն: Խորիմյանն ու Սրբանձնությանը մեկնում են Պոլիս արդարանալու: 1867 թ. Սրբանձությանը ձեռնադրվում է վարդապետ: Նյու հանգամանքը ամենի է դյուրացնում նրա ազգային-հայրենասիրական գործունեությունը, մեծացնում նրա ուսուցչությունը: Սրբանձությանը հայտնվում է մերթ Վարագում, որ Խորիմյանի արտահայտությամբ «Արծոնիվանների խումբը հոշություն է», օգնում է նրանց, «ազդու բարդող լաւագում Վանա ծով», մերթ գործում է Կարինում բաղարային վարժարանների փազորությունի պաշտոնությունը, մերթ էլ վարում է սր. Կարպատի վաճրի վանահայրության փոխանորդի պաշտոնը: Նշանակալից է մանավանդ Կարինում ծավալած նրա լուսավորական գործունեությունը 1867—1869 թթ. ընկած ժամանակամիջոցում որոշ ընդհատումներով նա եղել է Կարինի վարժարանների լիազոր-ությունը: Արծոնիվանի փաստաթյուրը վկայում են, որ Սրբանձությանը փոփոխություններ է մտցրել դարդացնան ծրագրերի և դասավանդվող առարկաների մեջ: Կարինի դպրոցներում դասավանդվել է ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, հոդագործու-

² Արծոնի Վասպորտական, 1862—1863, № 1:

³ Արծոնի Տարոն, 1863, № 12:

թյուն, լեզուներ, ազգային պատմություն: «Կարեն ոստինարանը հառաջադիմության բայլափոխին մեջ սրանչելի փոփոխություններ ունեցած է սա Սրվանձտյանց Գարեգին վարդապետի շնորհիվ, որը ազգայնոց անզուգական ուն է, տեղվոյս ժողովրդան թախանձանոք դպրոցին տեսուչ կարգված է. ինքը գրեթե առավոտն է մինչև երեկո մանկանց դաստիարակության համար ըրտինք կրթափեկ»⁴: Նշանակալից երևոյթ է եղել մանական Կարինում մեծահասակների համար Սրվանձտյանցի բացած կիրակնօրյա դպրոցը. «Նոր գործ մը, որ Կարին մինչև այսօր չէ տեսել, այսինքն կիրակնօրյա դպրոց բանալը իր (Սրվանձտյանցի—Է. Կ.) ժրազան աշխատությունն էր»⁵: Տարեց մարդիկ մեծ ոգևորությամբ ամեն կիրակի հանախում էին դպրոց, որ Սրվանձտյանցի ազգային պատմության ամեն մի դասը վերածվում էր հայրենասիրության ոգեշունչ քարոզի: Կարճ ժամանակամիջոցում Կարինում շատ բան է արվում ժողովրդի ազգային գիտակցության արթնացման համար: Ժողովրդի լուսավորության գործը Սրվանձտյանցի մոտ ձեռք է բերում քաղաքական հնչեղություն և նպատակալացություն: Սակայն երկար չի տևում այդ եռանդուն գործությունները: Հայթում են հետադիմական ուժերը: 1870 թ. մայիսին «Մանզումի էֆիլիարը» գումում է: «Կիրակնօրյա դպրոցը խափանված է հու, դասախոսությունը չըլլար, ոչ դասառու կա և ոչ դասասու...»⁶: Կարինում գտնվելու ժամանակին է վերաբերում Սրվանձտյանցի «Ծառ ազգային լուսավորության և դաստիարակության վրա»⁷, որ նա կարդացել է ոստինական տարին փակվելու կապակցությամբ: «Ծառ»-ի մեջ արտահայտված են Սրվանձտյանցի հայացքները լուսալորության, դպրոցի, ծնողների ունեցած դաստիարակիչ դերի մասին:

Կարինից Սրվանձտյանցը մեկնում է Մուշ և Խրիմյանի կողմից նշանակվում և. Կարապետ վաճարի վանահայության փոխանորդ: Այդտեղ էլ նա հանդես է գալիս իրեն ժողովրդի շամերի շերմ պաշտպան, կազմակերպում նրա բողոքները, ընդգործմերը, պայքարում է կատալարական պաշտոնյաների դեմ, Կ. Պոլսի ազգային լրագրերին հասցնում գալստում կատարվող իրադարձությունների ճշմարտացի պատկերը: «Մանզումի էֆիլիար»-ում հնչում են Սիլիքան եկանեցու սրբադության, Վարդոյի և Հով-

նաննավանցի կողոպտման ահազանգերը: Սրվանձտյանցի այդ շրջանի ամենաաշքի ընկերությունը նոդվածներից է «Մշեցվող վրա ընդհանուր տնտերություն մը»⁸ ընդարձակ նոդվածաշարը, որը գրին էր Խրիմյանի անմիջական պատվերով և «մեծ խորհուրդ մը ուներ»: Հոդվածաշարը մկարագրում էր Տարունի հայության հարատակարությունները, մերկացնում Մշո մեջիսի անդամների՝ այսինքն պետական պաշտոնյաների գործությունները: Հարցադրությունների պրոցեսը և փաստերի հավատիությամբ հոդվածաշարը մեծ աղմու համեց պահապատճյան մեջ և կառավարող շրջաններում⁹:

1869 թ. մետսներին Մկրտիչ Խրիմյանն ընտրվում է Պոլսի պատրիարք: Ուսուցիչը գավառից մայրաքաղաք է տանում արևմտահայության ցամերին դարման որոնելու իր անհուն ցամերությունը. աշակերտը՝ «մարտադիր զինվորը», մեռում է գավառում զօր ո գիշեր գործելու մեծ եռանդով ո պարաւականությամբ: Լայն էր Սրվանձտյանցի գործությունն ողորուն այդ տարիներին: Նա մնացել էր իրուն Վարագա և ս. Կարապետ վաներերի վանահայության փոխանորդ: Մեծ աշխատանք է կատարում Սըրվանձտյանցը Տարունու 1869—1872 թթ.: Նրա անմիջական օգնությամբ դպրոցներ են բացվում Մշո դաշտի, Վերին Բուլանընի, Ներքին Բուլանընի, Մանազկերտի, Վարդոյի բազմաթիվ գյուղերում և Տարունու գյուղու և. Հովհաննեա, Սուպերեղոց, ս. Դանիել, ս. Կարապետ վաներերում: Փաստաթղթերի մանրակրկիտ ոստմանափրությունը ցուց է տախի, որ այդ թվերին Սրվանձտյանցի կողմից բացված դպրոցներում սովորել են մոտավորապես 1000 աշակերտ: Այն ժամանակիւ համար դա պատկանելի թիվ էր: Պատրիարքի վասակությունն իր մերձավորագույն սահի և զինակցի նկատմամբ այնքան մեծ էր, որ միաժամանակ պաշտոն էր տվել և՝ Վասպուրականում, և Տարունու: «Քամի որ մեք պատրիարք եմք, ձեռք վիճակն այդ պիտի լինի, ամառն ի Տարոն, ձմեռն ի Վասպուրական»¹⁰: 1870-ի վերջում և 1871-ի սկզբում պատրիարքարանի կողմից Սրվանձտյանցը նշանակվում է Սահմանադրության գործադրիչ Վանում: Ահա թե ինչ էր հրահանգում Խրիմյանը Վան մեկնած իր «մեղափոխության զինվոր և նահատակին»: «Քամի որ հոդ եր, բակեցեք այդ մեռածներում ստրկության պատահը. բնավ տիվ ու

⁴ «Մանզումի էֆիլիար», 1869, № 895:

⁵ Նոյն տեղում, №№ 895, 897:

⁶ Նոյն տեղում, 1870, № 1288:

⁷ Գրականության և արվեստի բանագրան (ԳԱԹ)

Սրվանձտյանցի Փ., 2-րդ թ., գ. 65:

⁸ «Մանզումի էֆիլիար», 1869, №№ 892, 895, 898, 902, 918, 921, 928:

⁹ Մաշտոցի անվան Մատնադարան, մեռ. № 4179,

էջ 51, 51ա:

¹⁰ ԳԱԹ, Սրվանձտյանցի Փ., 2-րդ թ., գ. 449:

դադար մի տաք ձեզ. հասեք ի վերա ժամու և տարածամու. հոգի տուք, ոգնորեցեք այդ անթողի դիակմերը. վերցուցներ դոցա աշքի թանձրապարար կեղևներ»¹¹: Սրբանձտյանցի Ծերկապությամբ Վանում նոր ուժով բորբոքում է տասնամյակների հնություն ունեցող Պողոսյան-ապողոսյան պայքարը: Սրբանձտյանցը դառնում է ապողոսյանների պայքարության և Խրիմյանի աջ բազուկը Վանում: Նրանց միած եռանդուն պայքարի շնորհիկ հաջողվան է Վանը պատուի Պողոս եպիսկոպոսի՝ այդ «Բայանուն շնչախ» Ծերկապությունից: Այդ հայուական և սկզբունքային պայքարի համար Սրբանձտյանցը գովաստեր է առանում և Խրիմյանից, և Երեմիա եպս. Տևկանցից: Զնայած ծանրաբենվածությամ, Վանում ևս Սրբանձտյանցի աշքից չի վրիպում ժողովրդի լուսավորության գործու: Նա մեծ աշխատանքներ է տանում Վասպորականում նորանոր դպրոցներ բացելու ուղղությամբ: Նշանակալից է մանավանդ Վանի հգական վարժարան բացելու ուղղությամբ կատարած Արա աշխատանքները: 1870 թ. Սրբանձտյանցի հայուածեռությամբ Պողոս վանեցի գաղթականներից կազմվում է Սանդիստյան ընկերությունը, որի միջցությունով Վանում բացվում է Սանդիստյան հգական վարժարանը¹²: Մինչև իր կյանքի վերջ Սրբանձտյանցը մեծ խնամք ու հոգածություն էր տածում այդ դպրոցի մկանամար (առանձնապես ուսու-թուրքական պատերազմի և Արան հաշորդող տարիներին): և կարգավորում դպրոցի աշխատանքները¹³:

1873 թ. Խրիմյանը հրաժարական է տախու Պատրիարքությունից և մենու Պողոս իր քարոզիչ և Ազգային ժողովի անդամ: Համատարար Անդամում է նաև Սրբանձտյանցի գործության ասպարեզը: Նա ևս մեկնում է Պողոս և նվիրվում գրական աշխատանքի:

• • •

1866 թ. լույս էր տեսել Սրբանձտյանցի «Նոր ընթերցարանը» և ժամանակի մանկավարժների կողմից արժանացել ջերմ ընդունելության: Ընթերցարանի մեջ առաջարանում բացահայտված է նաև Սրբանձտյանցի լուսավորական, մանկավարժական առաջելու հայցըները: Դեռևս Վարագում ուսանելու տարիներին նա գրում է «Անկումն Սրբանձտյանց» և «Ծուշան Ծափա-

շանա» պատմական ողբերգությունները, որոնք ժամանակակիցների վկայությամբ հաշողությամբ բևադրություն են Վարագում և Տարբություններին, երանք հաջողություն են ունեցել, որովհետև պատմության օրինակով ուսուցանել են ժողովրդին «ապրիլ ուսանել», ապրիլ հայրաբար»: Դիմաներից առաջին չի հրատարակվել, իսկ երկրորդը լույս տեսալ 1875 թ. Կ. Պողոս: Մեկ տարի առաջ, 1874 թ., լույս էր տեսել նրա առաջին ժողովածուն՝ «Գրոց-բորց» և արժանացել անհամարժեա ընդունելության: Ժողովածուի առաջարանում հեղինակը բացահայտում է հասարակական այն դրդապատճանները, որոնք թելարել են նրան այդ գործի կատարմանը: Մագաղաթից տոկուն և անշինչ ժողովրդական բանավոր զրոյցներն ու ավանդությունները իրենց մեջ կենդանի են պատճ ժողովրդի պատմության դեպքերն ու անցքերը: Այս ժողովրդի վաղնաշական պատմություններ ստեղծելու համար պետք է դիմել ժողովրդին, «վեպը ու զրոյցը» համարված պահնդույուններին: Ոգևորված առաջին ժողովածուի ջերմ ընդունելությունից, զույն 1874 թ. Սրբանձտյանցը հրատարակում է իր 2-րդ ժողովածուն՝ «Հեոց-նորց»-ը, որը հիմնականում կազմված է գրավու աղբյուններից: Նյութերի առաջարան, բազմազանության և գիտական մեկնարարանման տեսակետից խիստ ուշգրավ է 1876 թ. Արա լոյս ընծայած 3-րդ ժողովածուն՝ «Մամանամ», որի հեղինակը հետապնդում էր Հայաստանը հային լավ ճանաչել տարու հպատակ. «Այս, հարկ է, որ մենք զմեզ քաջ ճանաչենք, մեր հայեր ճանաչենք, մեր հայրենիքը ճանաչենք»: Այդ հայրենիքը ճանաչելու ճանապարհը «հոներու խավերը, ջրերու խորերը, շննից փլատակները ու ավերակները, գրչով ու բրչով» պետեց է: Այդ պատճառով է ժողովածուի գոյսները կրում էին հետևյալ խորագրերը՝ «Հայրենյաց համ ու հոտ», «Հայրենյաց վեպը ու զրոյցը», «Երգը և նվազք հայրենյաց»: Առանձնապես հուզիչ է առաջին գոյսը՝ «Հայրենյաց համ ու հոտ»-ը, որը ընթերցողի առաջ բացում է Վանի, Արաբուրու թաղամասերի պատմական հուշարձանների, ժողովրդի առանցին աշխատանքների պատկերները: Դժվար է գերագնահատել ազգային գլուխ-գործոց ներկայացնող այդ բաժնի հշանակությունը առավել ևս այն պատճառով, որ այդ աշխատանք, կենսուակ և արգասավոր ժողովուրդը այլև չի գտնվում իր պատմական հայրենիքում: Իր հրատարակած ժողովածուների և ծավալած ազգային-հայրենասիրական գործության շնորհիկ Սրբանձտյանցը մեծ ժողովրդականություն, հարգանք ու սեր էր վայելու

¹¹ ԳԱԹ, Սրբանձտյանցի Փ., 2-րդ թ., գ. 550:

¹² Հ. Մրացան, «Հուշարձան», թ. Ա., էջ 79:

¹³ Ս. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 4183, էջ 221—222:

նայության երկու հատվածների մեջ: Նրա մեռ նամակագրական կապ և պահպանում արևելաբայ և արևմտահայ անվանի հանրային, գրական-լուսավորական գործիչները: Դրա վառ ապացույցը հազարից անցնո՞ւ այն նամակներն են, որ պահպանվում են ՀՍՍՀ Կողմությայի մինհասորության կից Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի բանգարանի արխիվի Գ. Միտոնյանի, Թ. Աղասյանի և ալլոց գործերում:

1877—78 թթ. ուսու-թուրքական պատերազմի և նրան հաջորդող տարիներին Սրբանաւտյանց բանահավաքն ու բանագետը իր տեղը զիջում է Սրբանաւտյանց գործից ու նաև ապարհության գույքով, մաղախով ու մականով: Պոլսի պատրիարքարանի և անձնապետամանակի պատրիարքը Ներսու Վարժապետյանի կոնդակով Գարեգին Սրբանաւտյանցը երկու անգամ ուրուով շրջել է Արևմտյան Հայաստանի հայարձակ նահանգները: 1878 թ. ապրիլի 26-ին մկրտում է Արա առաջին շրջագայությունը: Հետո չեր պատերազմի արթավիրքներից անմիջապես հետո կատարած այդ շրջագայությունը, երբ օդը լի էր պատերազմի մրրիկներով, և մոլեցանդ շնչիների քարոզներով հրամրված մուսուլմանական ամրություն դեռ չեր հանդարտութեա: Պատրիարքի հրահանգով Սրբանաւտյանց վարդապետը տեղագրում էր իր շրջած վայրերի վանքերը, շնչերն ու փատակները, կազմում այդ վանքերում եղած ձեռագրերի ցուցակը, երբեմն հատվածներ վերցնում նըրանցից, քայլ ամենազիստուրը նա կազմում է իր եղած վայրերի հայ բնակչության ճշգրիտ մարդահամարը: Արհստակես վարդապետ Տեր-Սարգսյանի, Վահան վարդապետ Մինասյանի (Պարտիզակցի) և Գարեգին վարդապետ Սրբանաւտյանցի պատրիարքարանը կաղողական մարդարանության մեջ մերժություն է տեսաւում էլեկտրոնային փոստում: Արհստակես վարդապետը պատրիարքարանը կաղաքացիների գործադրության վերաբերյալ: «Ներկա վարդարանները բարեկարգելու մեծ պետք ունեն, որոնցին օգտակար աշակերտներ կրնան ընծայել ազգին, մասնական աղջկանց դատիքարակության վրա ոչ դարձնելով. հոգ պետք է տանի ընտիր տարրությունը և լավագույն մեթոդներ հաստատել. որոց պակասությամբ է միայն, որ մեր վարժարանները անպտուի»:

Կմնան թե գավառներ և թե «Պոլիս»¹⁴: Դպրոցական խնդրից բացի Սրբանաւտյանցի ուշադրությունն իր վրա է ընեռու հայ կրանքի ամենացավալի երևոյթներից մեկը՝ Հայութանցը ամայացնող պանդխատությունն ու գաղթականությունը: Նա իր հոգու ողջ կարողությամբ պայքարել է պանդխատության և գաղթականության դեմ, այն համարելով հայ ժողովրդի հավաքականության սպառնացող ամենավասնագավոր երևոյթը: Իր կարծան կրանքի ընթացքում Սրբանաւտյանցը պայքարեց պանդխատության դեմ «քանիվ և գրչով»: Պոլսի հայոց պատրիարքը Ներսու Վարժապետյանը՝ քաջ ծանոթ լինելով հրա ընդունակություններին և խորի ազդեցությանը, ուսու-թուրքական պատերազմից մետք նրան ուղարկեց Կարին՝ կանչելու Բարձր Հայքի ժողովրդի մեծ տեղաշարժը, համոզելու ժողովրդին հաստատ մնալու հայրենի շենք և ամերակաց վրա: Իր շրջագայությունների ընթացքում Սրբանաւտյանցը քարոզում է ժողովրդին՝ շրել հայրենի երկիրը և հեռանալ օտար երկրները: «Հայաստանի մեջն է բուն հայկական խնդիրը և մեր Պեղմինի մեջ կորունեաք զայն»:

Բեղմինի վեճաժողովից հետո Բ. Դուռը երկու կոմիսեր ուղարկեց Ասիական Թուրքիա, բարեկորդությունների իրականացնելու համար: Մեկը Բերի քեն էր, մյուս՝ Արենին փաշան: Այդ խորամանկ քայլով Բ. Դուռը ցանկանում էր թող փշել եւլրպական պետությունների և բարեկորդությունների ակընկալու հայ ժողովրդի աշքերին: Պատրիարքարանը կոմիսներների մետ դրեն իր ներկայացուցիչներին, որոնց հրահանգված էր մի կողմից զաղտնի հսկել նրանց գործողություններին, մյուս կողմից էլ աջակցություն ցույց տալ նրանց: Ենքի քեյ հետ Բարձր Հայք մեկնեց Վահան վարդապետ Սինասյանը, իսկ Արենին փաշանի մետ պատրիարքարանը ուղարկեց Գարեգին Սրբանաւտյանցին՝ Տիգրանակերտի և Խարբերդի ուղղությամբ: 1879 թ. սկսվեց Սրբանաւտյանցի երկրորդ շրջագայությունը Արևմտյան Հայաստանի բարեկորդությունների ծրագիրը:

¹⁴ Գարեգին Սրբանաւտյանց, «Թորոս աղքար», 1-ի, էջ 280:

համայն ոչ թե նարդում, այլ վատրարացնում է տարբեր ազգերի հարաբերությունները: «Անա կոմիսարի առաջին քարիքը, դեռ ապահովությունը շիաստատված, դեռ քարեկարգության հանրական ո հիմնական պիտույք շվասած, հրավիրած է ժողովուրդը բողոքներ տալու և արական վտաճակով դիրքի մեջ դրած զանոնք: Տեղ-տեղ զորքեր դրած է, որոնց շարիքը այնքան է, որ ժողովուրդը կաղաղական: «Թողեր զմեզ մեր նեղից բոլոր ձեռքը և ձեր պաշտպանությունը պետք չէ մեզի»¹⁵: Մեծ հատաքրությունն են ներկայացնում Սրբանացոյանցի կազմած Զարանշակի, Բաղրի, Զմշկածագի վիճակագրությունները և պատրիարքարանին ուղղած տեղեկագիր նամակները:

Գարեգին Սրբանացոյանցի շրջագայությունների ժամանակ կատարած ազգային հայրենակիրական գործերը դրվատանքի արժանացան թե՝ պատրիարքարանի, և թե՝ ժամանակի առաջադատ հանրային գործիշտերի կողմից: Ժամանակարհորդությունների առջիկ արևմտահայ դեմոկրատ գրող Մատթավոր Մամորյանը գրում էր Սրբանացոյանցին: «Մենք վատահ ենք, որ Ձեզ պես արթուս ու հստու հայրենակեր հոգիներու շամքըն ու տքնությունը դեղ ու դարման պետք է քերեն Հայաստանի ցավերուն, զորս կը զգանք, թենի հծրախտարար հեռու կգտնը վիմք»¹⁶:

Սրբանացոյանցի երկու շրջագայությունների ժամանակ ստացած տպավորությունները իրենց գեղարվեստական մարմաքում ստացան «Թորոս աղքար, ճամփորդ Հայաստանի» երկիրատորանոց աշխատության մեջ: Գիրքը նոյնի, վերթու, ակնարիկ տպավորության մի ինքնատիպ համաձայնվածքը: Թորոս աղքար շրջագայությունների միջոցով ընթերցողը ծանոթանում է Հայաստանի անցրային ու մերկային, հապարտանում իր ժողովրդի ստեղծագործական համարով: Սրբանացոյանցը անցյալի փառքին հակառըրում է իր ժամանակի հայ ժողովրդի վեցտու կացությունը, զուրկ պետականությունից և քաղաքական իշխանությունից, օտարերի ճնշող բռնակալության մերքը, հողությած, պատակութած, «կեղծ բարերարների և որորների ցանցը ընկած»: Բազմաթիկ հարցեր է շշակում հեղինակը այդ գործի մեջ. նա բարձրացնում է արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հարցերը: «Թորոս աղքար» 1-ին հատորը լույս տեսավ 1879 թ., իսկ 2-րդը՝ 1884 թ.: Այդ հինգ տարիներն իրենց ազդեցությունն են թողել

Սրբանացոյանցի նայացքների վրա: Եթե 1-ին հատորում նա դժգութում էր, ընթիզում նայ ժողովրդի «ուրբաւական» վիճակի դեմ, գովերգում «գիտակցված մահիր», որ անմահություն է, ապա 2-րդ հատորում կարծեք թե նա հոյս էր կապում «քարենմամ կարսեր» և արդարադատ պաշտոնաների նետ: Այդ հոյսերը և զգուշակոր արտահարությունները պայմանակիրկան էին «ժամանակի դեպքերով ու իրադարձություններով»: Նոյն 1884 թ. լոյս տեսալ Սրբանացոյանցի 4-րդ ժողովածուն՝ «Համով-հոտով»-ը: Բուռն էր ժողովածուի սեղունեղությունը, որովհետև այնուղիւ պատմվում էր կենացի հայրենիքի, երա համ ու ո հոյսի մասին: Դա մի ջերս կոչ ուղղված հայ պահուիստներին, ու գայուականներին, մի համակ նիշտական ցանկություն՝ բոլոր հայերին միավորված: Վանը, Վասպուրականը, նրա գալականները՝ Սորակը, Մոկը, Հայոց ձորը, Ուտանը, Գալաշը, Բոլանցիներն ու Մանազկերտը մատուցվում էին ընթերցողին ականատեսի աշքերով: Ժողովածուն Հայաստանի ընությունը՝ հայ ժողովուի տառապահներների հազարամարդական ցկանական վկան, հեղինակի գրչով դասում է գործող անձ, իր մեջ ընակիլող մարդկանց շերս կարենիցը: Այդպիսին է Սիսականց լուր՝ ժողովրդի ամերի, տառապահների ու հառապահների արձագանքը. նաև Արտուրու լուր և այլն:

Սրբանացոյանցի ազգագրական և բանահավաքական գործունեությունը բարձր է զմահատվել իր ժամանակակիցների և նետագա սերունդների կողմից: Հայ ազգագրական գիտությանը մատուցած իր ծառայությունների համար կենաղանության օրոր Պետերորոգի կարսերական հնագիտական ակադեմիայի կողմից ընտրվել է պատվավոր անդամ¹⁷: Քիշմիշը ուստերեն է քարգմանել նրա «Համով-հոտով»-ը: Անգլիացի հայագետ Վընկերը մագիստրներ է քարգմանել և «Համով-հոտով»-ը: Սրբանացոյանցի մահիվանցից 50 տարի հետո Հակոբ Օշականը գրում է: «Կես դար է անցել անոր գերեզմանին: Ասկէ անդի անոր ձագ գործը փոխանակ աղոտելու, պատելու, կը պայծառան և կրյուելանա: Այսօր զայ կկարդան ամիսի խորունկ մեշտանքով մը, որքան չէին ըներ թերևս 50—60 տարի առաջ, երբ այդ հոգին կրող ժողովուրդը կապելու իր հոյերու վրա: Ի վերջո ո՞վ է գրագետը եթե ոչ ամ՝ որ պահ մը, աշխարի մը, ոգի մը կփրկե»¹⁸:

¹⁵ Գ.Ա.թ, թ. Ազատամի Փ., 12ր. գ. 10625:

¹⁶ Նոյն տեղում, Սրբանացոյանցի Փ., 2-րդ թ., գ. 878:

¹⁷ Եջը հայ գրականություններ, Ա. Բատոր, Գ. Սըրվանդյանց, էջ 11, Գամիրն, 1942:

¹⁸ Հ. Օշական, Հայաստանկեր արևմտահայ գրականության, թ. 4, Երևանին, 1956, էջ 327:

Հայ ժողովրդի պատագրական շարժումները 80-ական թվականներին մոտենաւ են նոր փոփի մեջ: Ենթապական դիվանագիտությունից հիմքարափիլած առաջադիմ գործիչները գգում են ժողովրդի իրավիճակի օրըստօրք վատյարացումը: Բնոյին վեհաժողովից վերադարձած Խրիմյանը Բարեհիք մեկնող պահուստների ականջին պատգամում էր «երկարէ շերեփի» պատմությունը: Խակ ճռա կրտսեր զինակիցը և հավատարին սամը գալստից գրում էր. «Եմ սկզբունքն էր քարոզել, թե օտարեն պետք չէ բան հուսալ, շամանք մենք զմեզ հոգալ, պատրաստիլ և ցոյց տալ ազգաց, թե մենք ալ ազգ մի ենք. մեր պատմության և մեր հայրենյաց արժանիքը մեր վրա ցուցանել... գիտության գորանալ, միտքամք դիմանազ, գործել և պահպանել մենք զմեզ, պատրաստել մայրեր, Բացցունել այրեր, կազմել ընկերություններ, չխնայել ետին բունա, զրկել զիրենքը և տալ այդ նպատակին համար: Այս է մեր միակ փրկության ճամբան և ահա այս էր իմ առաքելության ավելուածը»¹⁹: Գավառներում կատարած իր ազգային-հայրենասիրական գործերի շնորհիվ մեծ ժողովրդականություն վայելող Սրբանձրությանը 1878 թ. Ակնա ժողովրդի կողմից ընտրվել էր առաջնորդ և ծեռնամոխ եղել ազգօգուտ շատ գործերի կատարման: 1879 թ. Խրիմյանն ընտրվում է Վանի առաջնորդ: Նրա հրավեր-ճամակով և Ներսես պատրիարք Վարժապետյանի կոնդակով, առանց թողելու Ակնի առաջնորդությունը, Սրբանձրությանը ճշանակվում է Վանի առաջնորդական փոխանորդ: «Սըրվանձրությանց, որ այնքան լավ կճանչնար գավառը իր վարած զանազան պաշտոններու շնորհիվ, ավելի բան երկու տարի մեծ ծեռնամասությամբ վարեց Վանա թեմի ազգային գործերը... կրթական գործին ևս մեծ մղում տվալ, մինչ Խրիմյան առաջնորդի հանգամանքով կմնար սույ իրեն վերին հսկող»²⁰, — գրում է Սրբանձրությանի ժամանակակից Հ. Երամյանը: Քաջատեղյակությունը նահանգին և վարչական ուսուկեցությունները հնարավորություն են տալիս Սըրվանձրության հմտորեն վարել Վասպորականի ազգային գործերը. Երան հաջողվում է անկախ դիրք ծեռք թերել Վանի մեջիսում, որի պատճառով էլ հաճախ նահանգապետ

փաշայի զայրուցին էր գրգում²¹: 1881 թ. վերջում Սրվանձրությանը նրաժարական է տալիս առաջնորդական փոխանորդի պաշտոնից, Բեռանում Բաղեշ, որտեղ, ապա նաև Խարբերդում վարում է առաջնորդի պաշտոնը: Մեծ են Երա շանքերը Բաղեշի հայությանը բողոքականությունից և կաթոլիկությունից մեւ դարձելով ուղղությամբ: 1884 թ. Սրվանձրությանը ուղարկվում է Տրավիզոն իրու Պոնտոսի թեմի առաջնորդ: 1886 թ. մայիսին նա Մաղարիա վարդապետ Օրմանյանի թեմ մեկնում է Էջմիածին և օծվում եպիսկոպոս: Դրանից հետո է նա շարունակում է վարել Տրավիզոնի առաջնորդությունը: 1887 թ. Ազգային ժողովը և պատրիարքարանը միացնում են սր. Կարապետի վանահայրությունը Տարոնի առաջնորդության մեւ և իրեն վանահայրը ու առաջնորդ այնուեղ ուղարկում Սրվանձրությանը: Այդ կապակցությամբ մետաքրքիր է Խրիմյանի նամակը իր «Բայատարին ճագին»: «Ով պիտի երթա ի Մուշ և ով կիսամարձակի. ող գիտես Վուփորին և պիտի կափսկուպուներ և վարդապետներ. այդ վիտի բուլամորթ նզներ Հայաստանի կորդ երկրի վրա գուրան մի՞թե կարող են բաշկը: Ուստի պետք է այն եզն, որ հայրենի շրու արոտով սնած է, այդ եզր դոր եր... թերևս հաջողէ թեզ Աստված երթաս տապակա այդ աշխարհի մին ու նոր տգիտության ամրարտակեները»²²:

Տարնում Սրվանձրությանը մնում է 8—9 ամիս: Նրա աշխատանքը Մուշում «կարի տաճանակի էր, և ծանր, և խառն»: Նրա եռանկու գործունեությունը դարձյալ իր վրա է Բարիբում Օսմանյան կառավարության ուշադրությունը: Տարոնի պատմությունն ուսումնահրութեանը նշում էն, որ Սրվանձրությանի վրա եղան քաղաքական մատնություններ: 1887 թ. վերջին Սրվանձրությանը դարձյալ Տրավիզոնում էր, որ մնում է մինչև 1888 թ. վերջերը: Հետաքրքրություն է Երկալացնում այն օգնությունը, որ հայրենական գործիշը ցոյց է տալիս Օդողի գավառի Զավուշլար գյուղի գյուղացիներին մյուլերիզմի և տեղի գայլագամի դեմ Երանց մղած պայքարում²³: 1888 թ. Օսմանյան կառավարության պետություն պատրիարքարանը Սրվանձրության կանչում է Պոլիս և այլն թուզ չի տալիս գործել գավառում: Գավառներից ետ էին կանչված այն հոգևորականները, որոնք աշքի էին ընկնում իրնեց ժողովրդական գործունեությամբ: Պոլսում էին Սկրտիչ Խրիմյանը, Գրիգորիս եպիսկոպոս

¹⁹ «Փորձ», 1879, № 4, էջ 165:

²⁰ Հ. Երամյան, «Հշուարձան», թ. Ա, Ակնաբերիա, 1829, էջ 125, 127: Այդ տարիների Սրվանձրությանը գործունեության մասին խոսիւմ է նաև Ա. Թերգիապաշաշի «Արծիվը իր բոյնին մեջ» աշխատության մեջ:

²¹ «Տրավա», 1892, № 47 (Տ. Փիրումյանի միջողությունները):

²² Գլք, Սրվանձրությանի Փ., 2-րդ թ., գ. 532ա:

²³ Նոյն տեղում, գ. 128, 588, 589, 590:

Ավելարձյամբ, Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանը: Նրանց միացալ նաև Սրբանձությանը: Սակայն Պոլսում ևս չի դադարտում Սրբանձությանցի ազգօգուտ գործունեությունը: Նա ընտրվում է կրոնական ժողովի փոխ-առենանակեռ, Բերայի սուրբ Երրորդություն եկեղեցու քարոզիչ և ուսուցիչ՝ Ղալաթի Կենտրոնական վարժարանում: Աշքաբանի պատրիարքության տեսդրու օրերին նա այն սահմավարին բարձրաւոհճան եկաղեցականներից էր (Խորիմյանի, Խզմիրյանի և Ավելարձյանի հետ միասին), որ Բարձրագույն Դուռը Անրկայացրեց համագումար ժողովի տեղեկագիրը՝ պահանջելով՝ «Պողիս կանչված բանիմաց առաջնորդների վերադարձ գալապներ»²⁴: Այդ համագումարին համար հայրենասեր հոգևորականները պատրժվում են Բարձրագույն Դուռը կողմից. կառավարությունը Խորիմյանին ստիպում է «ուխտի գնապ» Երուսաղեմ, ուր «Արծիվը փակվում է ճնշողի վանդակի մեջ», Սըրվանձույանցն այլևս չի ընտրվում Ազգային ժողովի անդամ, իսկ Ավելարձյանի և Խզմիրյանի ընտրությունը Բարձրագույն Դուռը չի վավերացնում:

Կյանքի վերջին տարում կառավարությունն ավելի է խստացնում իր հսկողությունը Սըրվանձույանցի Ակատոմար: 1891 թ. հոկտեմբերին նա գրում է. «Մեր միշտ կյանքածիմք, յօն բռնարարվին մեր համակները թե այսուղ և յօն այդ տեղը (ակնարկում է Արևելյան Հայաստանը), զի մեր գործոց և գրվածոց վրա խիստ հսկողություններ կան»²⁵: Հենց այդ ժամանակ էլ նրա առողջությունը գտնվում էր անմիտիքար վիճակում: Մշտական ճամապարհորդությունները ձմեռվա սառնամանիքին կամ ամառվա տապին, ուղրով կամ շորով կմնակին, Արևմրտյան Հայաստանի վտանգավոր երթենեկության պարմաներում դեռևս ճանապարհորդու-

²⁴ Առենագորությունը Ազգային ժողովու, 1890, էջ 72—74, 97:

²⁵ Գ.Ա.Թ, Պ. Սիմոնյանի Փ., գ. 68ա:

թյան օրերին կարող էին եղերական վախճան ունենալ նրա համար: Նա երբեք շնորհուեց հարմարավետ կյանքի, շնայած «քըռնըրված ուսուցիչ մըն էր, սիրված եպիսկոպոս մը, ազդեցիկ ազգային մը Պողոս մեջ բոլոր բարիքներուն և վայելքներուն արդար իրավունքով»²⁶, բայց իր ողջ կյանքն անցկացրեց բուն հայ գալապում: Իր կյանքի 52-րդ տարում նա ամբուժելի միվանդ էր շարարականով, աղիքների և երիկամների բորբոքումով:

1892 թ. հոյեմբերի 13-ին մտնում է Գարեգին եպիսկոպոս Սրբանձույանը, Խորիմյանի արտահայտությամբ «Արծիվը ընտրելագույն մատուցությամբ՝ տարածամ մասնեն կորուսայր»: Մարվան առջիկ գրված մահախոսականում Արփիհար Արփիհարյանը գրում է. «Այդ վարդապետը գրեթե դպրոց չէր տեսած և սակայն գտնվեցան հնահատությունը, որը տեղեկանակով անոր գրքերու պարունակությանը, կարծեցին թե զիտեք քանի մը հին ու նոր լեզու որոց առաջնորդությամբ գիտուն եւած է: Երբն եկեղեցական թե վարդապետն և թե եպիսկոպոս եղած ատեն օրինակելի պաշտոնյա հանդիսացավ, միշտ պարտաճանաչ եղավ իրեն տրված ամեն հրամաններուն. գնաց ուր որ որ հրամարվեցավ իրեն պատրիհարքարանեն»²⁷:

Սրբանձույանցի կյանքի և գործի սեղմ շարադրամը ցուց է տախի, որ նրա ողջ կյանքը եղավ իր ժողովորին ծառայելու մի գեղեցիկ օրինակ: Եվ բյուր անգամ հրավացի էր Ա. Ալպյանանը, երբ գրում էր. «Քիչքրու համար կրնանք ըսի!—Իր ազգին կյանքը ապրեցավ լիովին: Սակայն սակավաթիկ են անոնք, որոնց համար ըսկինք.՝ Իր կյանքը եղավ հայունաբերումը իր ազգի կյանքի: Սրբանձույանցի կյանքը եղավ հայունաբերումը իր ազգի կյանքի»:

²⁶ Հ. Օշական, Համապատկեր արևմտամայ գրականության, Բ. 4, Երուսաղեմ, 1958, էջ 810—827:

²⁷ «Հայունիք», Կ. Պոլիս, 1892, № 506:

